ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԻՆՔՆԱԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքով սահմանված հարկերից ազատման արտոնության կիրառությունը նշանակում է, որ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող և բացառապես սույն օրենքի անբաժանելի մասը համարվող 1-ին հավելվածով սահմանված գործունեության տեսակներ (այսուհետ՝ սույն օրենքի իմաստով գործունեության տեսակներ) իրականացնող ինքնազբաղված անձինք ազատվում են այդ գործունեության տեսակների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկերից (այսուհետ՝ հարկային արտոնություն), բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածք այդ անձանց կողմից ապրանքների ներմուծման համար մաքսային կամ հարկային մարմիններին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկից և ակցիզային հարկից:

Ինքնազբաղված անձինք Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման համար մաքսային կամ հարկային մարմիններին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը~~, ինչպես նաև համայնքային բյուջե վճարման ենթակա հողի հարկը և գույքահարկը~~ հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: